

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՅԻԷ ԹՂՔԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵ Ե ՈՒՂՂԵԼ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բարձր

ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեռագիրներն ետ չեն դարձուիր,

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՆԻՆԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՓՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

Գահիրէի համար	արեւիկան	50
» » »	վեցամսեայ	30
Շրջակայից »	արեւիկան	60
» » »	վեցամսեայ	35

ԱՐՏԱՌԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Տարեկան	Յրանգ	18
Վեցամսեայ	»	10

ՌՈՒՍԻՅՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	բուրձի	7
Վեցամսեայ	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԻԿ Է

ԵՒ ԹՂՔԱՏԱՐԻ ԾԱՌՔԸ

Թերթին վարչութեան վրայ է

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ ՍԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՅԱՅՈՒՑԻՉ ՏԻՍՐ ՍՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՉԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱԽԻՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՈՒԹԱՅ ԹԱՅՏԱՐԱՐԵԼ ԹԷ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՏԻՍՐ ՍՄԲԱՏ ԲԻՐԱՏ ԱՅՍ ՕՐՈՒԱՆԷ ՍԿՍԵԱԼ ԴԱՐՄԱՆԵԱԼ Է «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ. 22 ՍԵՊՏ. 900

«Նոր Օր»-ի վարչութիւնը կը խնդրէ Արտասահմանի ու կովկասի արգոյ բաժանորդներէն որ հաճին պահանջել կրկնողով մը «Նոր Օր»-ի պակաս ստացուած թիւերը, որոնք պիտի զրկուին անվիշակէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր» ստացող բոլոր կովկասի հայ թերթերու ու հանգէսներու Պատ. խումբագիրներէն որ իրենց հրատարակութիւնները փոխանակեն «Նոր Օր»-ի հետ:

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՔԱՆԻՔԻՆԿԱՄԵԱԿԸ

ԵԸԼՏԸՉԻ ՔԷՕՇԿՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՏՐՏՈՒՆԸՂ

(Շարունակութիւն 33րդ. թիւէն)

«Միթէ գու չէ՛ր գուշակեր թէ գէմդ ապագային մրցակից պիտի ունենայիր Ռուսիոյ Գողաքներն, իբր փոխարեւութիւն ըրածիդ, քանի որ 1878ին արգելեցիր Ռուսիան որ չ'արշաւէ Հայաստան: Դու որու հողը՝ այնքան բարեբեր եղած է արտադրելու համար դիւանագէտի գլուխներ, որոնք իրենց հեռատես քաղաքականութեամբը ապահովեցին քու երկրիդ ապագան. որոնք մէկ խօսքով կըր-

ցան խել Սուլթանի ձեռքէն կիպրոսն ու Եգիպտոսը, առանց կարմիր ժախքաւորները սուգի մէջ թաղելու, որոնք կոչուած են դեռ շատ մեծագործութիւններ ընելու մինչև իսկ Արաբիոյ վրայ ձեռք դնելու:

Ռուսիան այդ դիւանագէտներու այնքան մեծագործութիւններու ականատես ըլլալով հանդերձ, ինչպէս կըրնամ ընդունիլ թէ անոնք սխալած են:

Դու, ո՛վ Անգղիա, պարզապէս քաղաքական այլևայլ դիտումներով ի մասնաւորի ի սէր քու ելևտական շահերուդ, խաբեցիր կղերական մը ազգասէր, որ պատասխանիդ կը սպասէ, հազորդելու համար զայն զինքը չըջապատող հօտին: Քանի որ չը պիտի գործէիր, գէթ ազատ ձգէիր Ռուսիան որ ի գործ գնէր 1878ին իւր ծրագիրն Հայաստանի մէջ. ո՛չ ապաքէն եթէ թուրքիոյ ժամանակակից պատմութեանը ակնարկ մը նետենք, պիտի տեսնենք որ Ռուսիա եղած է միակ փրկարար այն ամեն գերիշխան ազգերուն, Պուլկարին, Յոյնին, Սերպին- Գարատաղին, Ռուսիան որոնք թուրքին հալածանաց ներքե կը ծեծուէին ու կը ջախջախուէին:

Միթէ այդ փրկարար խաչն՝ ուրկէ կը գողային թուրքերը՝ չը պիտի վարուէր միևնոյն վեհանախարհամբ Հայուն հետ որ թուրքիոյ բազմադարեան գերին էր. ո՛չ, հոս գաղտնիք կայ. երբ Հայկական խնդիրը սեզանի վրայ ներկայացաւ, անմիջապէս պարտուեցաւ Հայաստանի քարտէսն, զոր ժամանակին Գուրտիսթան անուամբ ճանչնալ կուզէր ձեր Սալիզլըրին, և տեսնուեցաւ որ Հայկական նահանգները կը տարածուէին մէկ կողմէ մինչև Սև Ծով Կ. Պոլսոյ մայրաքաղաքէն ոչ այնքան հեռու. իսկ միւս կողմէ գէպի կիլիկիա:

Գողաքներն բայց միշտ պաղարին ընդ առաջ վազեցին, գրկեցին թեւերէն, ամեն միջոց ի գործ գրիւ Հայ Ռուսիայէն զատելու. ջանացիր որ Հայ տարրը մնայ ու չը ձուլուի Ռուսիոյ հետ, որպէսզի ուսական աղղղութիւնն ըլլայ քաղաքական և աշխարհագրական, Հայուն պատրուակաւ չը տարածուի մինչև այդ կեդրոնները, որ կրնային սպառնալ օսմ. մայրաքաղաքին և մինչև իսկ քու շահերուդ. արդարև դուն ասի հաստատելով՝ Հայուն դատին մէջ փնտռեցիր շահդ. հեռացուցիր Հայը Ռուսիայէն ու գծեցիր ճիւղը. յօգուածն ի նպաստ անոր, Ռուսիա խրոխտաց ու այդ վայրկեանէն կազմուեցաւ կուսակցութիւն Հայկական դատին համար, գրեցն ու Անտան. առիւր զիս կուսակցութեանդ գերին, որուն արքանեակն ըրիր զիս ի սէր Հայուն. ինչ եղաւ ասոնց հետեանքը: Ռուսիոյ քաղաքագէտները ոչ նուազ նըրբամիտ ձերիններէն, փոխարինելու համար քու ըրածիդ, սպասեցին ժամանակին. սկսաւ 1895ի Հայկական ջարդերու շրջանն, որու դէմ բողոքելու համար՝ կազմուեցաւ միջազգային նաւային ցոյց մը որուն քու մրցակիցդ Ռուսն իսկ մասնակից էր առ երկոյթս:

Կատակերգակ տեսարաններ էին ատոնք, երբ կը լսուէր միշտ թէ՛ «Կառավարութիւններն թէպէտ գործելու համաձայն են, բայց գործելու եղանակին մէջ իրարու համաձայն չեն»: Պարզապէս Ռուսիա գործելու հրապարակը քեզ ձգեց և ըսաւ, «Եթէ միևնաջ կրնաս գործել, օ՛ն ուրեմն գործէ»: Ինչպէս որ դու չի կրցար առանց Ռուսիոյ գործել:

Եւ հիմայ ըմբռնած եմ որ ցորչափ Ռուսիա կամք չ'ունենայ դու չպիտի կրնաս ունէ պաշտօն մը կատարել յօգուտ Հայուն Մայր-Հայաստանի մէջ, թերևս Կիլիկիայէն»: Շնորհակալութիւն յայտնելով ի նպաստ Հայաստանի գոհելոց Անգղիոյ մէջ եղած հանգանակութիւններուն, երբ տեսաւ որ լուս կը կենայ Անգղիա, դարձաւ ներսէս ըսաւ իւր հօտին որ անհամբեր կը սպասէր իւր պատասխանին. «Կը ցաւիմ յայտարարելու Ձեզ թէ՛ Հայկական դատին համար կուսակցութիւն կազմուած է որով Ռուսիոյ և Անգղիոյ մէջ անհամաձայնութիւն կայ գործելու, ինչ որ է Հնչակեաններու և Դաշնակցականներու միջև, որոց առաջինն կուզէ գործել կեզրոնացման գրութեամբ, իսկ վերջինն ապակեզրոնացման գրութեամբ»: Ի վերջոյ ներսէս վարժապետեան ջերմի մաղթեց միութիւն Անգղիոյ, Ռուսիոյ, Դաշնակցականներուն, Հնչակեաններուն ու իջաւ գերեզման:

(Շարունակելի)

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՆՈՒՍ

(Շարունակութիւն Գալուստի թիւէն)

Տարաբէլ կինէնայի մէջ Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին սեպհական ընդարձակ տուն մը կար, տարիներ յառաջ հրդեհէ մը աւերակ դարձած. այս միջոցին Եգիպտոս Երուսաղէմի պատրիարքութեան վիճակ էր և անոր բոլոր այս տեղի կալուածներուն մատակարարութիւնը ազգային Առաջ, նորդարանի ձեռքն էր, որու պետն ալ, Գաբրիէլ Սրբազան, Ս. Երուսաղէմի փայլուն (ոչ ուսումնական տեսակէտով) միաբաններէն մէկն էր. հետեալքար առանց ունէ դժուարութեան յիշեալ աւերակ տեղը կը գըրուի Գալուստեանի տրամադրութեան տակ՝ կառուցանելու իր մտադրած կրթական շէնքը, որ կ'սկսի և կը վերջանայ 1854ին, 20,000 Փրանքի ծախքով մը:

Կարապետ Գալուստ ո՛չ վարժարանի կառուցումին ատեն և ո՛չ յետոյ անոր ի նպաստ մեծ կտակ մը ըրած ժամանակ, չը պահանջեց բնաւ որ վարժարանը իր անունով կոչուի. վեհանաճ որոշումով մը, որ մեծ պատիւ կը բերէ իրեն և որ իր խորհելու եղանակին վրայ պայծառ գաղափար մը կուտայ միանգամայն, փափաք յայտնեց որ վարժարանը նուիրուի քերթողահայր Մովսէս Խորենացիի անունին. այն խորհնացիին, որ հայ դպրութեան և պատմութեան հայրն եղած է. սակայն իր ժամանակին անխիղճ եկեղեցականաց նախանձն ու մախանք զանի հալածած են մինչև գերեզման և գերեզմանէն ալ անդին՝ ոսկերտին հանել և ծովը թափել տալով:

Ահաւասիկ այս հալածեալ բայց բազմբախտ և հոյակապ անուան ձօնուած վարժարանին յիշատակարանն, որ ընտիր գրաբար է.

«Շնորհիւն Աստուծոյ ի հիմանց կառուցաւ վարժարանս յանուն քերթողահայր մերոյ Մովսէսի Խորենացւոյ (*) արդեամբ և ծախիւք վանեցի

ԾԱՆՕԹ. (*) Խորենացի վարժարանը 1897 մայիսին ի վեր, Գալ. Պատկ. Ընդհանուր ժողովոյ որոշման համաձայն, կը կոչուի Գալուստեան, հիմնադիր-քաղաքաբարձ անուանով. Յիշատակարանն սակայն ամփոփուի կը մնայ շէնքին անկախը:

ազգասէր կարապետ աղայի Տ. Գալուստեանի ի յաւերժական յեշատակ լուսահոգի հօրն Տ. Գալուստին և մօրն Մարիամայ և եղբօրն խաչատրոյ և համօրէն ննջեցելոց իւրոց և կենդանեաց, ի վայելումն և ի բարեկրթութիւն մանկուոյ Արամեան տոհմիս, որ յեղիպտոս, ի բարոյական յուսումնական վարժս գիտութեան»:

«Յամի Տեառն 1854 Սեպ. 13»:

Եւ այս թուականին չքեղ հանդէսով մը կը բացուի նորակառոյց երկսեռ վարժարանը, ուր կը փոխադրուին հին «դպրատան» աշակերտներն ալ:

Այս տարին էր որ Գալուստ-Եղիազարեան էլ-Մաթարիյէի ընկերութիւնն լուծուեցաւ, թողլով իրր կէս միլիոն ֆրանքի հաշիւ մը, առարկայ վէճի (*):

Կարապետ Գալուստ վարժարանի նիւթական շէնքը բարձրացնելէ յետոյ, կը մտածէ անոր բարոյական շէնքի մասին, որ ապաքէն խորին ուշադրութեան արժանի էր, քանի որ այն ատենուան ազգային եկամուտներէն հազիւ 1200 ֆրանք կարելի էր յատկացնել վարժարանի ծախուց ու այդչափ չնչին գումարով անհնար էր վարժարանէն յուսալ, ինչ որ իրաւամբ կ'սպասուէր սակաւաթիւ բայց կարեւոր ու յարածուն գաղութի մը միակ կրթական յարկէն, որ կողուած էր ըլլալ վառարան մը հայրենասիրութեան և կեդրոն մը հայկական դպրութեանց: Կարապետ Գալուստ ազգային դաստիարակութեան խնդիրն գէթ իր մահէն հետք հիմնապէս լուծուելու համար՝ իշխանավայել առատաձեռնութեամբ կտակագիր մը կ'ընէ և անով ի մէջ այլոց իր շինած վարժարանին կարեւոր կալուածներ կը նուիրէ:

Կտակն ինքնագիր է և թուրքերէն լեզուաւ շարադրուած, կը կրէ 1274 Շապան 1 թուականը, որ կը համապատասխանէ 1858, մարտ 5/17 չորեքշաբթի օրուան. վկան է խաչեր պէյ Միքայէլեան և հաստատողն Առաջնորդ Գաբրիէլ Սրբազան:

Չնք կրնար ըսել թէ կտակագիրն գլուխ գործոց մ'է խմբագրական տեսակետով. բայց ապահովապէս գեղեցիկ ներշնչարան մ'է ուսումնասիրութեան, ազգասիրութեան, ազգատասիրութեան և կրօնասիրութեան: Բարեկարգ իր այս կտակագրով տրամադրած է իրին՝ սեպհական ամբողջ ստացուածքն ի նպաստ այն հաստատութեանց և անձերուն, որոնք բարոյապէս և օրինապէս իրաւունք մ'ունին անոր վրայ. հոն վարժարանն իր բաժինն ունի, աղքատն իրն, եկեղեցին՝ իրն, ժառանգորդներն՝ իրենցն. մինչև իսկ իր պաշտօնեաններն ու ծառանորն մասնունին. ոչ ոք մտպուած է և ոչ ոք զրկուած:

(*) Այս վէճը ընկերներու մահէն քանի մը տասնեակ աստիներ յետոյ, 1892ին, տեղի տուաւ Առաջնորդարանի դէմ մեծ դատի մը, որ հետևեալ տարին Աղեքսանդրի յառաջնորդութեան վերջնապէս վճարուեցաւ ի մպաստ ազգին:

Չանց ընելով կտակագրի այս կէտերն, որ բարեկարգ ժառանգորդաց ու ծառայողներուն կը պատկանին, անհրաժեշտ կը դատենք հոս ամփոփել անով ազգին եղած նուիրատուութիւններն:

1. Ասիոյ ի նահանգին Տէլճա գիւղին մէջ մէկ ազգարակ չորս հարիւր ֆէտտան (*) տարածութեամբ, իր պարունակութեամբը և անշատ տունով մը. հասոյթը իր հիմնած վարժարանին յատկանալի իր մահէն անմիջապէս յետոյ:

2. Կիլիկի նահանգին Շէյխ Էլթման գիւղին մէջ (340) ֆէտտան տարածութեամբ մէկ ազգարակ, մէջի բնակարանովը, 600 արմաւենիներովը և ըն:

3. Նոյն նահանգին Ազիլիյէ գիւղին մէջ (60) ֆէտտան մէկ ազգարակ:

Բարեբարին մահէն յետոյ այս երկու ազգարակներուն՝ բնքէն տարեկան վաթսուն էրտէպ (***) ցորեն հայ աղքատաց բաշխելի ու մնացեալ հասոյթն ալ իր կնոջ, քանի որ ողջ է կամ վերստին ամուսնացած չէ. հակառակ պարագային, հասոյթն ամբողջ վարժարանին:

4. Պարտէզով երկու տուներ յԱղեքսանդրիա Մահմուտիյէի շրանցքին վրայ, բարեբարին մահէն յետոյ, ասոնց ալ հասոյթն ստանայ կինն, ցորչափ ողջ է կամ նորէն կարգուած չէ. ու անկէ վերջ յատկանայ Աղեքսանդրիոյ մէջ եկեղեցի մը կամ վարժարան մը շինելու կամ այս վերջնոյն հասոյթ մ'ըլլալու. պայմանաւ որ եթէ կտակած կալուածներուն եկամուտը Գահիրէի իւրակերտ վարժարանի ծախքերուն չբաւէ, այդ երկու տուներուն հասոյթն ալ անոր կապուի:

5. Ղազարոս աղա Տ. Գասպարեանէ ունեցած և մաս առ մաս գանձելի 6000 ոսկիէն իր մահուան ժամանակ ինչ գումար որ մնացած է, անկէ տարուէ տարի (100) ոսկի յատկացուի Գահիրէի խորհրդեան վարժարանին աղքատ ուսանողաց հագուստ շինելու համար:

Կարապետ աղա Գալուստ իր նոյն կտակագրի մէջ, որու համար ամբողջ Հայ ազգն երախտապարտ պէտք է մնայ իրեն, կամք յայտնած է նաև անշարժ ստացուածքներուն կալուածագրերն կտակընկալ հաստատութեանց անուններուն դառնան, ի ձեռն Գահիրէի Հայոց Առաջնորդարանին զոր կարգած է կտակակատար:

Կարապետ Գալուստ իր կտակագրի մէջ և ոչ իսկ սովորական դարձած հոգեհանգստեան պաշտօնի կատարումը խնդրած է ազգէն. տարուան հինգ տաղաւարներուն այդ կրօնական արարողութիւնը կատարել և իր հոգիին համար աղքատաց ողորմութիւն տալը իր կնոջ վրայ պարտականութիւն դրած է կտակագրին մէջ:

Ն. Մ. ԱՂԱՉԱՐՄ (Շարունակելի)

(*) Մէկ ֆէտտանը 4200 քառակուսի մետրէն քիչ մ'աւելի է: (***) Մէկ էրտէպը իւր 150 քիլօ է:

ՏԵՂԵՎԱԳԻՐ

ՔՆՆԻՉ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎՈՅ ՄԻԱՄԵԱՅ ԳՈՐԾԱՌՈՒԹԵԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՎՈՅ ՀԱՅ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՑՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ինչպէս որ քիտէք, Տեառն, Պատկ. Ընդհ. Ժողովը իր 9 Սեպտ. ի տարեկան նիստին մէջ լսել յետոյ իր Գործ. Ժողովոյ միամեայ տեղեկագիրը և հաշուետուութիւնը, ներկայացուած հաշուոց քննութիւնը կատարելու համար, միաձայն հաւանութեամբ հաշուեքննիչ Յանձնաժողովոյ անդամ նշանակեց հետեւեալ հինգ անձնատուութիւնները.

- Տիար Համբարձում Պերպերեան
» Երուանդ Աւագեան
» Առաքել Փափազեան
» Արմենակ Կոխանեան
» Եւառչ Երեմանեան

Հետեւեալ վերոյիշեալ Տեառն իրենց նուիրական պարտականութիւն նկատեցին պատասխանել ձեր հրաւերին, ընդունելով իրենց յանձնուած պաշտօնը. միայն թէ այս անթիւ կ'զգան թէ պարտականութիւն մը ևս ունին կատարելու կանխաւ, այն է, յայտնել իւրեանց անկեղծ շնորհակալիքը Պատկ. Ժողովոյ այն վստահութեան համար որով հանցեաց զիրենց պատուել:

Հաշուեքննիչ Յանձնաժողովս փութաց ուրիշ իր պաշտօնը ի գլուխ հանել հինգ նիստերու մէջ հաւաքաբար և այսօր ձեզ կը ներկայացնէ իւր քննութեանց արդիւնքը:

Նախ՝ Յանձնաժողովս ցաւօք սրտի կը յայտարարէ թէ ներկայացուած հաշուեկշիռը որևէ տոմարներու վրայ չեն հիմնուած, այլ խարխափմամբ ձեռք բերուած են Գործ. Ժողովոյ Պատ. անդամներէն միոյն գրգայնի տեսքէն ուր ընկերութեան հաշուական գործողութիւնը խառն ի խառն նշանակուած են մատիտով, ընդմիջեալ երեսներու վրայ, մերթ տարբեր հաշիւներ միեւնոյն երեսին վրայ ամփոփուած, մերթ գծուած և ջնջուած, կարծես լարբիւրնթոս մը ուրից գորս ելնելու համար Արիւնէի թիւը կարեւոր է. եղած են տեղեր ալ որ ձգական խէտով մարդու և վերստին հաշիւներ գրուած են. զայս կ'ըսենք տետրակին վիճակին վրայ ճշգրիտ գաղափար մը տուած ըլլալու համար, վստիզի զայն գրողին պարեկեղծութիւնը ամեն կասկածէ հեռի է Յանձնաժողովոյ անդամաց համար. Այսու հանդերձ Պատկ. Ժողովը ուրախ պէտք է ըլլայ զէթ սյրպիսի տետրակի մը գոյութեան համար, որոյ տէրը՝ այս պահուս հիւանդանոցի մէջ, զէթ հաշուետուութեան կարեւոր տարրեր կրցած է մատակարարել. եթէ երբէք այդ տետրակն ալ գոյութիւն չունենար, կամ գլխուն փորձանք մը եկած ըլլար..... հետեւութեան վրայ ձեզ կը թաղուէք խորհրդածել:

Թէ միշտ ընկերական գործողութեանց սկիզբն ի վեր այդ տետրակն է որ իբր հաշուետուութեան ծառայած է. արդար ըլլալու համար անմիջապէս ըսեմք թէ ո'չ. մասնաւոր տոմարներու գնման համար ընկերութիւնը հարկ եղած դրամը չէ խնայած և այսօր ունի իւր Օրհաշիւը, Մայր-հաշիւը, Նուիրատուներու և Հաւայի ճուլարները. առաջին երկուքն մէջ հաշուական գործողութիւնը 1899 Օգոստ. 1է սկսեալ հասած են տարուայ մինչև Ապրիլ 29 թուականը: Այս տոմարներու մէջ յայտնի կերպի թէ հաշուակալը մի քանի երես գիր դրելու աշխատութիւնը կրած է, բայց ակնարկ մը կը բաւէ հասկնալու համար թէ զրոյր տոմարագիտութեան տարրական սկզբունքներն իսկ զուրկ գտնուած է և այդ մի քանի հաշիւները փոխանակ պարզելու ճգնած է աւելի մթաղնել. իբր նմոյշ բաւ է յիշել թէ Օրհաշուի առաջին յօդուածը հետեւեալ կերպով սկսած է. «Գանձապետ պահանջէ զանպան ծախքերը». չենք գիտեր թէ ինչ սխալութիւն կը վերաբերի տոմարագիտութեան այս

եղանակը, իսկ Մայր-հաշուոյ մէջ թիւերը գումարելու հոգն անդամ չէ ստանձնուած և կը զարմանամք թէ ինչ կերպով կարելի եղած է առաջին ութամեայ հաշուեկշիռ մի հանել տոմարներէն մինչև 31 Մարտ թուականն տարուայ. նաև Օրհաշուոյ մէջ, հակառակ օրինաց խտտութեան, տեղի ունեցած քերթուածներն (կը խնդրենք բանաստեղծութիւն չըմբռնէք) ամենակարեւոր թուանշաններու վրայ, զգուսնօք մէկդի նետել կուտան այդ տոմարներն:

Կը յուսամք թէ տոմարներու վիճակի մասին այսքան տեղեկութիւն կը բաւէ ըմբռնել ապու համար Պատ. Ժողովոյ թէ Յանձնաժողովս ինչ գիտարութեանց բաշխեցաւ իրեն ներկայացուած հաշիւները ընդունու համար, ստիպուած ըլլալով պրպտել թղթի կտորներ հաշուոց ճշգրտութիւն նստուղիու համար. կրնանք հոս յայտարարել սակայն թէ պատրաստուած հաշուեկշիռը իթէ ճշգրտութեամբ չէին ներկայացներ, մեր գտած տարբերութիւններն ալ այնքան մեծ չ'եղան զեղծում անուանելու չափ:

Իրաց այս անկերպարան վիճակին զըխաւոր պատասխանատու նկատելով Գործ. Ժողովոյ Տիար Առեւտագետը, որուն պարտքը էր ի հարկէ հսկել հաշիւներու կանոնաւորութեան վրայ, իրեն դիտել տուինք այս անկանոնութիւնները, որոց հետեանօք հաշիւներու ճշգրտութեան կասկածելութիւնը, որուն ի պատասխանի Տիար Ս. Բիւրատ յայտարարեց թէ արդէն ինքն իսկ այդ մասին գանգատ յայտնած է իւր տեղեկագրին մէջ թէ Գործ. Ժողովոյ անդամներէն մի քանին պաշտօններն թողուցած, մին քաղաքը մեկնած, միւսն հրկանդացած, գրեթէ բոլոր աշխատութիւնը երկու կամ երեք անձերու վրայ ծախարբեմեալ էին. մինչդեռ ինքը արդէն իրեն յատուկ խմբագրական աշխատութիւններով ալ բեռնաւորեալ չէ կարողացած հաշիւներուն վրայ ալ հսկել, կամ նոյն իսկ անձամբ կարգադրել. թէ հազիւ կարող եղած է տոմարներէն և հաւաքչի տետրակէն ներկայացուած հաշուեկշիռը պատրաստել, որուն ճշգրտութիւնն ալ բացարձակապէս չկրնար երաշխատել և թէ այդ թեւորութեանց պլխաւոր պատասխանատու պէտք է ճանչնալ հաշուակալը:

Այսպիսի յայտարարութիւն մը յետոյ գէթ հաշուոց մասին կատարեալ գաղափար մը կարենալ կազմելու համար Յանձնաժողովս հարկ դասեց իւր երկրորդ նստին հըրաւիրել Ընդհ. Ժողովոյ նախորդ դիւանի Բ. Առեւտագետ Տիար Ա. Պալեանը իրեն ընկերացնելով Գործ. Ժողովոյ հաշուակալ Տիար Ս. Ջրովանը և այնպիսի այլ անձնատուութիւններ որոց ներկայութիւնը՝ Տիար Պալեան իւր կողմէ կարեւոր կը դատէ հաշուոց լուսաբանութեան համար: Այսպիսի դիմում մը ըրինք հրապարակի վրայ տարածուած այլ ընդ այլոյ զրոյցներու ճշմարտութեան հասու ըլլալու և զանոնք ստուգելու համար, միայն թէ կը ցաւինք ըսել թէ մեր սոյն հրաւերին ի պատասխան ստացանք ըրուութիւնը:

Յանձնաժողովս տոմարներու քննութեան յետոյ անցաւ բաժնեկիներու ընկալագրերու քննութեան. յիշուի թէ սոյն քննութիւնն ալ երկարատև եղաւ մտաբարձման բազմապիսի ընկալագրերու բուները հաւաքչի տետրակին հետ և իւր քննութեան ընթացքին մէջ շատ մը զիտողութեան կետեր նշանակեց, որք արդիւնք կրնան նկատուիլ խղճամիտ պարտականութեան մը անդիտակից շարժումներու, մինչդեռ հանրային գործերու մէջ հարկը կը պահանջէ ունելի ճշգրտագոհ, աւելի կանոնաւոր ըլլալ, համարատուութեան մէջ իւր անձը կասկածի և հարկութեան դատաստանին չ'ենթարկելու համար:

(Շարունակելի)

ՃԵՍԱՐՏՈՒԹԻՒՆՆ

ԱՂԵՔՄԱՆԻՐՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՎՐԱՅ

(Շարունակութիւն մախորդ թիւէն)

Յաւարտ այս վիճաբանութեանց Նախագահ Սրբազանը Տնօրէն խորհրդոյ ասանա մեայ գործառնութեանցը համար և քննիչ Յանձնաժողովոյ ընկերութեան շահուցը համար ցոյց տուած նախնականութեան և այս ոգով կատարած անձանձիբ աշխատութեանցը համար շնորհակալութիւններ առաջարկեց որք ժողովոյ կողմէ քուարկուելէ յետոյ, Օրակարգի Գ. խնդրոյն ձեռնարկուեցաւ և ժողովոյ միաձայն որոշմամբ Տ. Արմալի Մուրատեան քննիչ Յանձնաժողովոյ անդամ հռչակուեցաւ:

«Այս միջոցին խօսք առաւ Տ. Լ. Մկրտիչը «եանն առաջարկեց յետաձգել ժողովոյ շահութեան վերաբերեալ ըստ որում, ըսաւ, իր «նախորդ առաջարկը՝ ներկայացուցչական «քուարկութեան պէմ, աւագ կարեւորութիւն «ունի ընտրական գործերու մէջ: Եւսինը պահանջեցին նաև Տնօրէն Տօզը. Միսակ ժամկտեան և կարապետ ժամկտեան և Պերճ «Օհանեան, որ նաև օրը տարածմամբ լի «նկուն, այսինքն կէս օրը անցած լինելուն, «ժամանակի անպատեհութիւնը առարկելով «բուժօրէն պահանջեց որ յետաձգուի ժողովը, յայտարարելով նաև թէ Ա. Ատե. «նապետի ընտրութիւնը կենսական խնդիր «մ'է ընկերութեան շահուց տեսակետով»:

Երկայ ժողովականներէն շատեր այս տարբերակ պահանջմանց և գայն ներկայացնելու համար գործածուած անվայել եղանակներուն դէմ բողոքելով յաջորդաբար, Օրակարգի խնդիրները ամբողջապէս լուծելու ստիպողականութեան վրայ ժողովոյ աշխատութիւնը հրաւիրեցին, նկատելով մանաւանդ թէ ընտրական գործողութիւնները երկար ժամանակ չպահանջելով տեղի չկար ժամկտային անպատեհութիւնը պատճառով:

«Վիճաբանութեանց վերջ մը տալու համար Նախագահ Սրբազանը քուէի նիւթարկեց սոյն առաջարկութիւնները ի մասին «ժողովոյ շարունակութեան կամ յետաձգելու «մաս: Բուժարկութեան արդիւնքը եղաւ «Տի դէմ 28 ձայնով ժողովոյ շարունակութեան որոշումը, որ հռչակուեցաւ ի Դիւանէ»:

«Ժողովականներէն ուրի անձինք (*) սոյն «որոշումէն դժգոհ, նոյն հետայն մեկնեցան «ժողովարարէն, որոց սոյն ընթացքին համար Նախագահ Սրբազանը ցաւ յայտնեց»:

Քուարկութիւնը տեղի ունեցան մասնակցութեամբ ներկայ ժողովականաց որոց թիւը նոյն պահուն 28 էր:

Ընդհանուր ժողովոյ Ա. Ատենապետ ընտրուեցաւ Տ. Աստուր Շէրիտեան 27 քուէով:

Ա. Ատենապետի ընտրուեցաւ Տ. Վահան Խորասանեան 24 քուէով:

Յետոյ Օրակարգի վերջին խնդրոյն Տնօրէն ժողովոյ պակասեալ անդամոց յաջորդներու ընտրութեան ձեռնարկուելով, ընտրուեցան.

Տնօրէն Յովհաննէս Մ. Թաշեան 26 քուէով, Արամ Կրշակեան 25 քուէով:

«Ժողովականը փութացին իրենց խորին «շնորհակալութիւններն յայտնել Նախագահ «Սրբազան հօր որ հանցեալ պատականօր

(*) Տնօրէն Լ. Մկրտիչեան, Տօզը. Միսակ ժամկտեան, Կարապետ ժամկտեան, Պերճ Օհանեան, Ղազարոս Ասրուճի, Յակոբ Փափագեան, Գէորգ Իփէլեան, Գէորգ Երմիլիզեան:

«առաջնորդել ժողովը՝ օրինաւոր ու արդիւնաւոր լուծմամբ Օրակարգի բոլոր խնդրոց»:

Նիւս. Ժ. — 27 Օգոստոս 1899

ՕՐԱԿԱՐԳ

1. — Ընթերցում և վաւերացում նախորդ նստի ատենագրութեան:

2. — Ընթերցում տեղեկագրի Տնօրէն խորհրդոյ ընկերութեան վերակազմութեան երկրորդ տարեշրջանի Ա. վեցամսէի գործառնութեանց:

3. — Առաջարկութիւն Տ. Լ. Մկրտիչեանի, քուարկութեանց մէջ ներկայացուցչական գրութեան բարձման վերաբերմամբ: Թիւ ներկայ ժողովականաց 12.—

Ժողովոյ օրինաւորութեան համար անհրաժեշտ մեծամասնութիւնը չգոյանալով, որոշուեցաւ 15 օրէն կրկին գումարուիլ՝ ըստ 10րդ. յօդուածոյ կանոնագրութեան, անփոփոխ պահելով օրակարգը:

Նիւս. Ժ. — 10 Սեպտեմբեր 1899

Թիւ ընդհանուր անդամոց 90
» Կարգաբեւ ըստակայից 20

Ուստի և թիւ հրաւիրեալ անդամոց 70
Թիւ ներկայ անդամոց 46

Փոխ-Ատենապետ Տ. Ա. Ճէվահիրեան ատենանք բանալով յայտարարեց թէ կանոնագրի 10րդ. յօդուածոյն համաձայն՝ հակառակ ներկայութեանց փոքրամասնութեան, ժողովոյ սոյն օրուան նիստը օրինաւոր է: Կարգաբեւեցաւ Նախորդ թիւը. նստի ատենագրութիւնը:

Յայտնուած միակ դիտողութիւնն էր Տ. Լ. Մկրտիչեանինն, որ ըսաւ թէ՛ «ատենագրութեան վերջին մասին մէջ, ժողովոյ շահութեան վերաբերման մասին յառաջ բերուած դիտողութիւններու պէմ — ժամանակի անպատեհութիւնը պատրուակելու — դարձուածքով երեցած նախադասութիւնը արդարացի չէ ըսաւ, ըստ որում ժողովականաց «յայտարարութիւնները իբրև անկեղծ համոզումներ պէտք է ընդունել միշտ և ոչ թէ «յայտարարութիւնները մեկնել զանազան «ձեւերով կամ մասնատի տակ, ուստի և բողոքեց «պատճառով իր «քուարկութեան դէմ, «որուն տեղ, ըսաւ, թերևս աւելի յարմար «ըլլար առաջնորդել» բան ընդունիլ»:

Դիւանին կողմէ այս բանական դիտողութիւնն առանց առարկութեան ընդունուելէ յետոյ, ժողովականը միաձայնութեամբ վաւերացուցին յիշեալ ատենագրութիւնը:

«Յետոյ կարգաբեւեցաւ Տնօրէն խորհրդոյ 23 Յուլիոս 1899 թուակիր վեցամսեայ «տեղեկագիրը, ըստ կանոնագրի 26րդ. յօդուածին տրամադրութեան որուն կցուած էր «նաև յանուն Վսեմ. Պողոս փաշա Նուպարի՝ Տ. Մկրտիչ Անդրանիկեանի 30 «Յուլիոս թուակիր նամակը, որով յիշեալ «յանուն Նուպարեան ընտանեաց շնորհակալութիւն կը յայտնել Տնօրէն խորհրդոյ, «բարեկիշտակ Նուպար փաշայի թաղման «առթիւ ի նպատակ քաղաքի աղքատաց և «զաղկապանաց շնորհուած 200 ոսկեայ գումարին՝ արդիւնաւոր և խղճամիտ կերպով «բաշխուած լինելուն վերաբերմամբ»:

«Տ. Լ. Մկրտիչեան խօսք առնելով յայտարարեց թէ անտեղի էր տեղեկագրին «կցել Տ. Անդրանիկեանի նամակը քանի «որ Տնօրէն խորհրդոյ իւր տարեկան տեղեկագիրը չէր որ կը ներկայացնէր, արդարացուցիչ թուղթերու կամ ստացագրի «ներու տրցակի մը հետ, այլ միայն վեցամսեայ գործառնութեանց վրայ լոկ տեղեկութիւն մ'է զոր կը հաղորդէր, որուն «մէջ ոկարգմբ իրաւունք չունէր գոյութիւն «ունենալու այդ օրինակ շնորհակալութեան

«զիր մը, որքան ալ Տնօրէն խորհրդոյ «արժանի դատուած ըլլայ այդ շնորհակալութեան գրոյն. մանաւանդ որ, ըսաւ, այդ «զիրը Ընդհանուր ժողովոյ Դիւանին ալ ուղարկուած չէ, որպէսզի Դիւանը պարտաւոր «համարէր ինքզինքը ներկայ ժողովոյն համար «զորպէս անոր պարունակութիւնը»:

«Խօսք առաւ Տ. Յովհաննէս Շնորհաբեան «և, իբրև Ատենապետ Տնօրէն խորհրդոյ, «յայտարարեց թէ շատ բնական էր որ Տնօրէն խորհրդոյ փութար կատարել Ընդհ. «ժողովոյն հաղորդելու պարտականութիւնը «նամակի մը որ բաշխուէր մ'էր ընկերութեան, մանաւանդ որ մտաւորապէս 340 «ոսկեայ վեցամսեայ ընդհանուր հասոյթին «մէջ զիստուր գումարը յիշեալ 200 ոսկին «ըլլալով, անոր բարոք զործածութեանը «նկատմամբ Վսեմ. Պողոս փաշայի և ընտանեացը կողմէ Տ. Անդրանիկեանի առ «Տնօրէն խորհրդոյ ուղղած նամակը ոչ թէ «իրբ արդարացուցիչ թուղթ մը պէտք է «նկատուի, այլ զօհուանակութեան նշան մը «Նուպարեան գերդաստանին կողմէ, որուն «ժամ առաջ արձագանգ գտնուէն անշուշտ «գոհ պիտի մնային ընկերութեան բոլոր «անդամները»:

Ի դիմաց Դիւանին Տ. Միհրան Թեւեկեան ևս մի քանի բացատրութիւններ տալով ի պատասխան Տ. Լ. Մկրտիչեանի յարուցած խնդրոյն, յարեց թէ «Սոյն տեղեկագրի մասին վիճաբանութեան երկարաձգումը «կարելի չի նկատուի ըստ որում Տնօրէն «խորհրդոյ տարեկան տեղեկագիրը և համարտուութիւնը միայն ընդունուած և վիճաբանութեան նիւթարկելի են ըստ Գրք. «յօդուածի կանոնագրութեան, մինչդեռ վեցամսեայ տեղեկագրի մասին ունէ տրամադրութիւն չկայ կանոնագրին մէջ, որ «թոյլատրէ այժմէն անոր ընտանագրութիւնը, «ցորակի Տնօրէն խորհրդոյ գործառնութիւնը «ընկերութեան նպատակէն չեն շեղիր և «օրինաւորութեամբ կատարուած կը մնան»:

«Սոյն խնդրոյ մասին ուրիշ խօսք առնող «գտնուելով, Տ. Փոխ-Ատենապետը յայտարարեց թէ Օրակարգի սոյն երկրորդ «խնդրոյն վերաբերմամբ ժողովը կը վերապահէ իւր դիտողութիւնները, եթէ ունենայ, Տնօրէն խորհրդոյ տարեկան համարտուութեան ժամանակին, ըստ կանոնագրի 13րդ. յօդուածի՝ յետ լսելոյ քննիչ «Յանձնաժողովոյ տեղեկագիրը»:

«Յետոյ ձեռք առնուեցաւ Օրակարգի 3րդ. խնդիրը»:

Տ. Միհրան Թեւեկեան խօսք առաւ և իւր «համարտութիւնը յայտնելով հանդերձ Տ. Մկրտիչեանի առաջարկին, դիտել տուաւ «թէ գործնականին մէջ շատ գոտաւորութեան «պիտի բաղդի ընկերութիւնը քանի որ կանոնագրի 2րդ. յօդուածը ժողովոյ մասնակցութեան իրաւունքը կուտայ նաև իր «զական սեռէ ընկերաց որոց ներկայութիւնը ցարկ ընաւ տեղի ունեցած ըլլալով, կամ այն է որ կանոնագրի այդ տրամադրութիւնը հարկ է փոխել և կամ Տ. Մկրտիչեանի առաջարկը բարեփոխութեամբ «միայն ընդունիլ»:

«Խօսք առաւ Տիար Յովհ. Շնորհաբեան «և պարզեց թէ գործնական միջոց մ'էր «ընդունիլ ներկայացուցչական գրութիւնը, «սահման մը գնելով սակայն ձայներու թիւը սոյն մասին»:

«Տ. Լ. Մկրտիչեան առարկեց թէ ներկայացուցչական գրութիւնը ժողովի գործողութիւնները կրնայ իրենց խորհրդարանական բուն հանգամանակներէ մերկացուելու և անհասկանալի կամ անպատեհական ձևով յայտնուելու»:

«որով և շեշտեց իւր առաջարկի կատարումը»:

«Տ. Երուանդ Տէրվիչեան խօսք առնելով յիշեցուց ժողովին թէ ինքը տեղական «բարեգործական հաստատութեան մը կանոնագիրը տեսած է, որ իրաւունք կուտայ իւրաքանչիւր անդամի առ առաւել «երեք ձայն միացունել իրենին, ինչ որ, ըսաւ, շատ նպատուար է տեղոյս այս «կարգի ժողովներուն համար, քանի որ փոքր «նոյն հաստատուած իրողութիւն մ'է որ «անպատեհել շատերը գործերու և այլ կարգի պարագայներու բերմամբ յաճախ իսկ «չեն պտտասխաներ հրաւերի»:

«Տ. Տէրվիչեանի սոյն պատճառաբանութեամբ վրայ Տ. Տօզը. Միսակ ժամկտեան «առաջարկեց որ իւրաքանչիւր անդամ մէկ «ձայնէ աւելի ներկայացուցչական հանգամանք չունենայ»:

«Տ. Մկրտիչեան, ըստ յայտարարութեան Տ. Տօզը. Միսակ ժամկտեանի, իւր առաջարկութիւնը բարեփոխեց և իւր սոյն բարեփոխութիւնը արձանագրեց իւր ներկայացուցած նամակին ի ստորեւ»:

«Գուէի դրուեցաւ յիշեալ բարեփոխեալ «առաջարկութիւնը որ ընդունուելուն չընտրուած ժողովականաց մեծամասնութեան «կողմէ»:

«Յետոյ Տ. Երուանդ Տէրվիչեանի առաջարկութիւնը քուէի դրուելով մեծամասնութեամբ ընդունուեցաւ: Հետեալ Տ. Փոխ-Ատենապետը իբրև ժողովոյ որոշում հրաւիրեց թէ յետ այսօրիկ իւրաքանչիւր անդամ առ առաւելի երեք ձայնէ աւելի ներկայացուցչական հանգամանք չպիտի կարենայ ունենայ»:

Նիւս. Ժ. — 12/25 Մարտ 1900

ՕՐԱԿԱՐԳ

1. — Ընթերցում և վաւերացում նախորդ նստի ատենագրութեան:

2. — Ընթերցում Տնօրէն ժողովոյ վերջին տարեկան շրջանի տեղեկագրի և հաշուեցոյցերու:

3. — Ընթերցում բացատրական նամակի Տնօրէն ժողովոյ վերջին տարեկան շրջանի գործառնութեանց վրայ:

4. — Ընթերցում քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագրի և վաւերացում հաշուեցոյցերու:

5. — Ընթերցում 1900-1901 տարեկան շրջանի հատուցից և ծախուց ծրագրի:

6. — Ընտրութիւն Տնօրէն ժողովոյ:

7. — Ընտրութիւն Ընդհանուր ժողովոյ Դիւանի հրաւիրեալ Ա. Ատենապետի և Բ. Ատենապետի:

Թիւ ընդհանուր անդամոց 94
Թիւ քաղաքէն ըստակայից 8

Թիւ հրաւիրելոց 86

«Ժողովոյ գումարման համար որոշուած «ամսուն (9. 30) խորհրդարանին աթոռներուն մեծագոյն մասը գրաւուած էր արդէն օտար բաղմութեան մը կողմէ»:

«Տ. Ա. Ճէվահիրեան, Բ. Ատենապետ, հրաւիրեց ներկայ գտնուող անդամները ներկայութեանց տուարին մէջ արձանագրուիլ»:

«Այս գործողութիւնը աւարտելէն յետոյ ստուգուեցաւ թէ հրաւիրեալ անդամոց 96 թուոյն վրայ 34 անդամք անձամբ, և 22 անգամը փոխանորդագրեով ներկայացած էին, հետեալս ներկայութեանց ընդհանուր թիւը 56 ըլլալով, ժողովոյ օրինաւորութեան համար հարկ եղած մեծամասնութիւնը գոյացած էր»:

Յ. Յ. ՇՆՈՐՀԱԲԵԱՆ
(Շարունակելի)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԻՎԼՈՆԸ

(ՄՐՐԿԱՒԻՑ ՓՈԹՈՐԻԿ)

Կիլկոնները յաջորդաբար սկսած են սպառնալիք ընել Ամերիկայի նահանգներուն վերջերս աշխարհի ամեն կողմ հեռագրուեցաւ թէ թէքասի (Ամերիկա) ծովեզերքը բովանդակ բնակիչներովը կիլկոնի կատաղութեանը տակ հիմնայատակ եղած էր :

Արդարև ըստ վերջին մանրամասնութեանց կիլկոնը սկսած էր իր կատաղութեան նշանը ցոյց տալ, երբ մէկ կողմէն կը բարձրանար արագութեամբ ծովը, ու իր կազմած լեռնային ալիքներուն մէջ առնելով հոն գըտնուող բոլոր նաւերը, կը խորտակէր ու կ'ընկղմէր զանոնք : 180ի մօտ նաւեր իրենց նաւաստիներով այսպէս անհետացան :

Միւս կողմէ ցամաքին վրայ հողմ ու ջուրի վիշապային հոսանքներ ու թաթառներ, ալ ու ձախ յարձակելով կը կործանէին ամեն բան. եթէր ժամուան մէջ անհետացան 4000 տուներ, կորան 8000 հոգիներ. ծառեր, տուններ, հունձքեր, իրենց արմատներէն խլուելով հեռաւոր գիւղերու վրայ նետուեցան. ծով, ցամաք, ջուր իրարու խառնուած էին. ծովու և ցամաքի երեսը գիւղերու դաշտ մը կը ներկայացնէր, որոնք անմիջապէս յետոյ կառավարութեան միջոցաւ կըրակի տակ այրուեցան, երկիւղով որ սեւ համաճարակ ախտ չը ծագի. սովը սկսած է այժմէն :

Կիլկոնը ընդհանրապէս Ամերիկայի երկիրներուն յատուկ պատուհաս մը եղած է, որ նոյն տեղի օդային հոսանքին՝ մթնոլորտին վրայ ունեցած ճնշման հետեանքն է :

Le Gérant J. MUNIER

Ա Ջ Դ

Ազգային Գալստեան վարժարանի համար Օգնական - Ուսուցչուհի մը պէտք ըլլալով, փափաքողք կրնան դիմել վարժարանս և բանակցիլ Տնօրինութեան հետ :

Տնօրինութիւն

Գալստեան Երկ. վարժարանի

ԳԱՅԷ ԵՓՐԱՏ

Ապիին Պապ-Էլ-Պոսթալէրապարակին վրայ եւ Նուագածուաց խմբի Ջօրանցի դիմացը

ՕՂԱՆԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՀԱՅՄԳՐՈՒԾԵԱՆ ԵՒՂԵՆ :

Մէկ հատիկ Ջօրանցի է Գահիրէի մէջ, ուր կենցաղատէր մը կարենայ անցընել հաճոյալի ժամանց մը. Ապտինի ընդարձակ հրապարակին զովագրին օդը, վայրին սքանչելի դիւրքը, և սպասներուն մարբութիւնը, ըմպելեաց անարատութիւնը. այս ամեն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ՋՐԹՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախողներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկան, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վախերէն երջանիկ ընկերութիւն մը :

Ամեն կարգի զովարար, թարմ ու անխառն ըմպելիներէ զատ մասնաւոր խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միջոցներէ օչարակ. ամենէն դըժուարահաճներն անգամ պիտի գոհ մնան Եփրատէն :

ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԱ. ԴԱՋԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապահ

Նիեու-Տիւրքիսի իգեղարանին դիմացը.

Օղատուն ու զուարճալի դիւրք մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու մննդարար կերակուրներու զանազանութիւն, անխարդախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով. ահա՛ Գազանճեան եղբարց ճաշարանը :

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վատահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախողք պիտի դառնայ հայկական ճաշարանին :

ՊԱՆԳ ԼԻՕՆԷՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՑԵԱՆ

Լիոնի հանրաժանութ զրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Մ. Կրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վատահութիւնը կը վայելէ :

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ զրամական և քուէտի ֆոնտիէի, Վիլ տը Բարիի գործողութիւններ, գանձումներ : Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած :

Փափաքողները հաճին դիմել Նիւպառի վրայ փաստաբան Ռաբթաքիի զրասնեակը :

ՊԵԼԱՆԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐՁԱԿԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻՎԱՆՑ

ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապիին մեծ պողոսային վրայ Տայիթայի Օսնիթի դիմացը, Գալսիին Էլիսեական գործիներու վաճառատունը :

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարուի :

ընէր արդոյ հասարակութեան թէ պատրաստ ենք գոհացնել մեզ դիմող Պատ. յաճախողները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտագնութեան կողմէն :

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւանդուին նաև ձեւագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով :

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին :

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաթէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գտնուողն է :

Կը բժշկէ բերնի և ակոյի ամեն տեսակ հիւանդութիւնները : Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9 :

ՉՈՒԼԻՉ-ՄԵԲԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԱՐԱՐԻ

ՍՄԱՐԿԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԻՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

—X—

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արոյրէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, և շն, յաճախողները գոհացնող պայմաններով :



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ. ՍՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորման, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադիրներ, նամակազրուիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ և շն. :

Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամով եւ ճաշակաւոր սպասարարութեամբ :

ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ